

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 41/5

20 հոկտեմբերի 2015 թ.

Քննարկվեց «Մանե և Վահե Հովակիմյաններ» ՍՊԸ 18.09.2015 թ-ի դիմում-բողոքը ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 09.09.2015 թ-ի թիվ 236/08 որոշման դեմ:

«Մանե և Վահե Հովակիմյաններ» ՍՊԸ բողոքում բերված փաստարկները.

15.09.2015 թ-ին փոստային բաժանմունքի միջոցով ստացվել է ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի՝ հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին 09.09.2015 թ-ի թիվ 236/08 որոշումը: Համաձայն որոշման «Մանե և Վահե Հովակիմյաններ» ՍՊԸ-ից պետք է գանձվի 718.000 ՀՀ դրամ պարտավորության գումար: Պարտավորությունների առաջացման հիմք է հանդիսացել հսկիչ-դրամարկղային մեքենայի կիրառման կարգի խախտման համար 28.09.2013 թ-ի թիվ 1108320 ստուգման ակտով արձանագրված գումարը՝ 358.000 դրամ, նույն ակտի 30%-ը և 13.07.2012 թ-ին նույն խախտման համար կազմված թիվ 1102031 ակտի 30% միասին 360.000 դրամ:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70, 71 հոդվածներով ներկայացվում է սույն բողոքը հետևյալ հիմնավորմամբ և պատճառաբանություններով:

«Մանե և Վահե Հովակիմյաններ» ՍՊԸ-ի կողմից դեռևս 2013 թ-ի հոկտեմբերի 21-ին հայցադիմում է ներկայացվել ՀՀ վարչական դատարան 28.09.2013 թ-ի թիվ 1108320 ստուգման ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասին: Դատարանի կողմից ներկայացված հայցադիմումն ընդունվել է վարույթ (վարչական գործ ՎԴ/9519/05/13 և գործը մինչ օրս գտնվում է ընթացքի մեջ:

Ելնելով վերոգրյալից՝ «Մանե և Վահե Հովակիմյաններ» ՍՊԸ-ն խնդրում է վերացնել 09.09.2015 թ-ի թիվ 236/08 որոշումը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետը, քննարկելով «Մանե և Վահե Հովակիմյաններ» ՍՊԸ-ի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, որ 09.09.2015 թ-ի դրությամբ ընկերության չկատարված հարկային պարտավորությունները կազմում են 718.000 դրամ, որից ՀԴՄ-ի տուգանք 358.000 դրամ, որն առաջացել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Հրազդանի ՏՀՏ 28.09.2013 թ-ի թիվ 1108320 ստուգման ակտի հիման վրա, ՀԴՄ տուգանքի 30%՝ գումարով 360.000 դրամ, որն առաջացել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Հրազդանի ՏՀՏ 13.07.2012 թ-ի թիվ 1102031 և 28.09.2013 թ-ի թիվ 1108320 ստուգման ակտերի հիման վրա: Արդյունքում, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 88-րդ հոդվածների դրույթներով ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից 09.09.2015 թ-ին ընդունվել է թիվ

236/08 որոշումը (այսուհետ նաև Որոշում) «Մանե և Վահե Հովակիմյաններ» ՍՊԸ-ից 718.000 դրամ պարտավորության գումար գանձելու վերաբերյալ:

Քննարկվող դեպքում Որոշմամբ գանձման առաջադրված պարտավորություններն առաջացել են ՀՀ ԿԱ ՊԵԿ Հրազդանի ՏՀՏ 13.07.2012 թ-ի թիվ 1102031 և 28.09.2013 թ-ի թիվ 1108320 ստուգման ակտերով:

ՀՀ ԿԱ ՊԵԿ Հրազդանի ՏՀՏ 28.09.2013 թ-ի թիվ 1108320 ստուգման ակտի վերաբերյալ անհրաժեշտ է նշել, որ նշված ակտի իրավաչափության հարցը ներկայումս քննվում է ՀՀ վարչական դատարանում՝ դատական գործ N ՎԴ/9519/05/13: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վիճարկման հայցի վարույթ ընդունելը կասեցնում է վիճարկվող վարչական ակտի կատարումը մինչև այդ գործով գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

Վերոգրյալից հետևում է, որ մինչև N ՎԴ/9519/05/13 դատական գործով գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը ՀՀ ԿԱ ՊԵԿ Հրազդանի ՏՀՏ 28.09.2013 թ-ի թիվ 1108320 ստուգման ակտի կատարմանն ուղղված գործողությունները կասեցվում են: Այսինքն, քանի դեռ դատական կարգով չի որոշվել ՀՀ ԿԱ ՊԵԿ Հրազդանի ՏՀՏ 28.09.2013 թ-ի թիվ 1108320 ստուգման ակտի իրավաչափության հարցը, այդ ակտով արձանագրված պարտավորությունները չեն կարող գանձման առաջադրվել:

Ինչ վերաբերվում է ՀՀ ԿԱ ՊԵԿ Հրազդանի ՏՀՏ 13.07.2012 թ-ի թիվ 1102031 ստուգման ակտին, ապա հարկ է նշել, որ դրանով առաջադրված պարտավորության 30%-ը, որը կրկնապատկման հետևանքով կազմում է 180.000 դրամ, մինչ օրս ընկերության կողմից չի վճարվել: Ընդ որում, ի տարբերություն ՀՀ ԿԱ ՊԵԿ Հրազդանի ՏՀՏ 28.09.2013 թ-ի թիվ 1108320 ստուգման ակտի, 13.07.2012 թ-ի թիվ 1102031 ստուգման ակտի վերաբերյալ որևէ գործ ՀՀ դատարաններում չի քննվում: Հետևապես ՀՀ ԿԱ ՊԵԿ Հրազդանի ՏՀՏ 13.07.2012 թ-ի թիվ 1102031 ստուգման ակտով առաջադրված պարտավորություններն ընկերության կողմից ենթակա են կատարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

1. Չեղյալ համարել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 09.09.2015 թ-ի թիվ 236/08 որոշումը:

2. ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետին.

«Մանե և Վահե Հովակիմյաններ» ՍՊԸ-ի վերաբերյալ կայացնել նոր որոշում՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ Հրազդանի ՏՀՏ 13.07.2012 թ-ի թիվ 1102031 ստուգման ակտով արձանագրված տուգանքի չվճարված մասը գանձման առաջադրելու համար:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ